ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2016 թվականի N243 -Ա ք.Գյումրի

ԱՐՏԱՇԵՍ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N 44 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N1355-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 44 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպման ձևով միացվել է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու N 45 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2016 թվականի փետրվարի 22-ի տեղեկանքի՝ նշված օրվանից դադարեցվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 44 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը և կազմակերպությունը հանվել է իրավաբանական անձանց պետական գրանցումից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 126-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

2016 թվականի փետրվարի 22-ից Արտաշես Հակոբյանին ազատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 44 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է